



**ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ**

Պէյրուք, 10 Սեպտեմբեր 2012

Դիւան թիւ 185/12

Թանկագին ներկայացուցիչներ
համայն Հայութեան Չորրորդ Իշխանութեան,

Իշխանութիւն մը՝ որուն անփոխարինելի կարեւորութիւնը բոլոր ժամանակներուն, բոլոր պետութիւններուն ու ազգերուն եւ ասոնց հովանաւորութեան տակ գործող բոլոր կառոյցներուն համար՝ այնքան հոյակապօրէն ցոյց տուած է Միացեալ Նահանգներու Անկախութեան հռչակագրի հեղինակը՝ նախագահ Թամըս Ճեֆրըսըն աւելի քան երկու դար առաջ ըսելով որ պիտի նախընտրէր ունենալ մամուլ մը առանց կառավարութեան, քան թէ կառավարութիւն մը՝ առանց մամուլի: Խորապէս ցուցանշական այս գնահատականին վրայ ան կ'աւելցնէ թէ խօսքը կը վերաբերի Ճշմարտութեան հետամուտ ու պաշտպան մամուլին, որովհետեւ Ճեֆրըսըն մեծ հաւատացեալ մըն էր Ճշմարտութեան վերջնական յաղթանակին:

Ճշմարտութեան յաղթանակը յաճախ արդիւնքն է ըլլալով հանդերձ երկար պայքարի եւ բազում զոհողութիւններու, անոր յաղթանակի անխուսափելիութեան հաւատով կ'ապրի ու կը գործէ ամէն հաւատացեալ քրիստոնեայ: Որովհետեւ, Տէրը Ճշմարտութիւնն իսկ է, իսկ Տէրը անպարտելի է:

Թանկագին զինուորագրեալներ հայկական մամուլի,

Անցեալ շուրջ հարիւր տարիներու ընթացքին դուք գտնուեցաք Հայութեան գոյապայքարի բոլոր մակատներու յառաջապահ դիրքերուն վրայ: Հայապահպանութեան պայքարին մէջ անփոխարինելի եղաւ Հայ Մամուլին եւ անոր զինուորագրեալներուն դերակատարութիւնը՝ Հայ Եկեղեցւոյ, Հայ Դպրոցի, Հայ Ակումբի եւ ընդհանրապէս հայկական կառոյցներու կողմէն, ինչու չէ՞ նաեւ մեր ազատամարտիկներու կողմէն ու թիկունքին: Դուք չեղաք սոսկ լրատուներ, չոր ու ցամաք տեղեկատուներ, անդիմագիծ պաշտօնեաներ, այլ հանրային նշմարտադրոշմ կարծիքի մշակներ, եղաք Հայ մշակոյթի դպրոց ու ամբիոն, դարձաք հայակերտումի դարբիններ, Հայու ինքնութեան ու անվտանգ գոյերթի մանապարհը լուսաւորող փարոսներ: Եղաք ու ըրիք այս բոլորը եւ դեռ աւելին: Իբրեւ հայկական պահանջատիրութեան առաջատար դրօշակակիրը, դուք եղաք խօսափողը Հայոց Ցեղասպանութեան միջազգային մանաշման հրամայականը համաշխարհային հանրային կարծիքի կիզակէտին մէջ պահելու համազգային պահանջին: Ճակատագրական պահերուն եղաք ազգային գորաշարժի շփոթահարը:

Շարունակելով հանդերձ այս բոլորը ըլլալ ու ընել, այսօր, Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ, դուք՝ Ճշմարտութեան անգերազանցելի գէնքով զինուած,